ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-31/24-I/IPSL

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 114 292 716 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 114 292 716 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 24/6, 5-6 հարկեր Հ/հ՝ 900018005497 ՀՎՀՀ՝ 02508174 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ _____ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ Կ. Տ.	Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝	_____ (ստորագրություն) Օրդուխանյան Էմիլ Հրաչյայի

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-31/24-I/IPSL պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-31/24-I/IPSL պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 114 292 716 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա	**Կազմակերպություն**
Նախագահ՝	տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-31/24-I/IPSL պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	6
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	6
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	26
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	35
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	7
Գիտաժողովի նյութեր՝	15
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Նազարյան Հայկ Վոլոդյայի
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-31/24-I/IPSL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	108 222 716	21 644 543	27 055 679	27 055 679	32 466 815
2.	տնտեսական ծախսեր՝	2 170 000	434 000	542 500	542 500	651 000
3.	այլ ծախսեր՝	3 900 000	780 000	975 000	975 000	1 170 000
Ընդամենը՝		114 292 716	22 858 543	28 573 179	28 573 179	34 287 815

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հասմիկ Վլադիմիրի Գուլքանյան

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-31/24-I/IPSL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2 170 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	500 000
2.	*գազի ծառայություն*	1 000 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	100 000
4.	*կապի ծառայություն*	500 000
5.	*աղբահանություն*	70 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**3 900 000**
1.	Գույք	500 000
2.	Սարքեր և սարգավորումներ	1 000 000
3.	Նյութեր	300 000
4.	Գործուղումներ	500 000
5.	Գիտական միջոցառումների կազմակերպում	400 000
6.	Հրատարակման ծախսեր	1 000 000
7.	Ներկայացուցչական ծախսեր	200 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Հասմիկ Վլադիմիրի Գուլբանյան

Կ. Տ.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-31/24-I/IPSL պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Օրդուխանյան Էմիլ Հրաչյայի	Ինստիտուտի տնօրեն	600 000	12	հիմնական	40	7 200 000
Սուքիասյան Հայկ Հրահատի	Փոխտնօրեն գիտության գծով	450 000	12	հիմնական	40	5 400 000
Նազարյան Հայկ Վոլոդյայի	Ինստիտուտի գիտական քարտուղար	175 000	12	հիմնական	20	2 100 000
Գուլքանյան Հասմիկ Վլադիմիրի	Ինստիտուտի հաշվապահ	225 000	12	համատեղություն	20	2 700 000
Աթաբեկովա Սեվիլ Միքայելի	արխիվավար	160 000	12	հիմնական	40	1 920 000
Մեսրոպյան Արսեն Էդուարդի	տնտեսվար	250 000	12	հիմնական	40	3 000 000
Գրիգորյան Խաչատուր Մաքսիմի	ատաղձագործ	65 000	12	հիմնական	20	780 000
Անտոնյան Սարգիս Վոլոդյայի	տեխնիկ	65 000	12	հիմնական	20	780 000
Դանիելյան Արամ Հենրիկի	պահակ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Մաթևոսյան Սիրանուշ Վաչիկի	հավաքարար	100 000	12	հիմնական	40	1 200 000
Հովհաննիսյան Վարդուհի Կարենի	տնօրենի օգնական	70 000	12	ներքին համատեղություն	20	840 000
Սաֆարյան Նաիրա Նաիրիի	Տնօրենի օգնական, քատուղար	104 000	12	հիմնական	40	1 248 000
Անանյան Անուշ Վահանի	Անձնակազմի կառավարման բաժնի պետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Գզողյան Մարիամ Միխաիլի	տնօրենի օգնական	70 000	12	համատեղություն	20	840 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Փիլիսոփայության տեսության և պատմության բաժին						
Սարվազյան Լիլիթ Սերոժի	Ղեկավար	224 876	12	հիմնական	20	2 698 512
Միրումյան Ռիմա Արտավազդի	Առաջատար գիտաշխատող	209 994	12	համատեղություն	20	2 519 928
Մանասյան Ալեքսանդր Սարգսի	Առաջատար գիտաշխատող	209 994	12	համատեղություն	20	2 519 928
Արզումանյան Սվետլանա Սուրենի	Ավագ գիտաշխատող	150 137	12	հիմնական	20	1 801 644
Սարիբեկյան Հրաչյա Հարությունի	Ավագ գիտաշխատող	150 137	12	համատեղություն	20	1 801 644
Սամարչյան Ալեքսանդր Սեմոնի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Կարապետյան Մարինե Մերուժանի	Լաբորանտ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Օսիպյան Արմեն Վազգենի	Լաբորանտ	59 856	12	հիմնական	20	718 272

Բաժին Սոցիոլոգիական հետազոտությունների բաժին						
Պողոսյան Գևորգ Արամի	Ղեկավար	224 876	12	հիմնական	20	2 698 512
Պողոսյան Ռիմա Մինասի	Ավագ գիտաշխատող	300 275	12	հիմնական	40	3 603 300
Առաքելյան Իրա Արծրունի	Ավագ գիտաշխատող	300 275	12	հիմնական	40	3 603 300
Ջիջյան Անահիտ Ռոբերտի	Ավագ գիտաշխատող	150 137	12	համատեղություն	20	1 801 644
Ապիկյան Գայանե Մինասի	Լաբորանտ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Բաժին Քաղաքագիտական հետազոտությունների բաժին						
Շիրինյան Լևոն Ղազարի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Օրդուխանյան Էմիլ Հրաչյայի	Առաջատար գիտաշխատող	209 994	12	ներքին համատեղություն	20	2 519 928
Սուքիասյան Հայկ Հրահատի	Ավագ գիտաշխատող	150 137	12	ներքին համատեղություն	20	1 801 644
Սիմոնյան Գուրգեն Էդմոնի	Ավագ գիտաշխատող	150 137	12	հիմնական	20	1 801 644
Նազարյան Հայկ Վոլոդյայի	Ավագ գիտաշխատող	150 137	12	ներքին համատեղություն	20	1 801 644
Ստեփանյան Վահագն Հովհաննեսի	Ավագ գիտաշխատող	150 137	12	հիմնական	20	1 801 644
Աղայան Նարինե Ալբերտի	Կրտսեր գիտաշխատող	179 900	12	հիմնական	40	2 158 800
Հովհաննիսյան Վարդուհի Կարենի	Լաբորանտ	119 713	12	հիմնական	40	1 436 556
Ավետիսյան Անուշիկ Շիրակի	Լաբորանտ	59 856	12	հիմնական	20	718 272
Բաժին Պետաիրավական հետազոտությունների բաժին						
Ստեփանյան Հովհաննես Միքայելի	Ղեկավար	224 876	12	հիմնական	20	2 698 512
Սաֆարյան Գառնիկ Հրաչիկի	Գլխավոր գիտաշխատող	500 018	12	հիմնական	40	6 000 216
Ղազանչյան Էիլիթ Արմենի	Ավագ գիտաշխատող	150 137	12	հիմնական	20	1 801 644
Շուքուրյան Արմեն Վաչագանի	Ավագ գիտաշխատող	150 137	12	համատեղություն	20	1 801 644
Ուզունյան Կարինե Մակիչի	Լաբորանտ	59 856	12	հիմնական	20	718 272
Խումբ Իրավունքի միջազգայնացման և իրավահամեմատական ուսումնասիրությունների գիտահետազոտական խումբ						
Հակոբյան Դավիթ Լևոնի	Ղեկավար	174 940	12	համատեղություն	20	2 099 280
Խալաթյան Արտաշես Արտավազդի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Գրիգորյան Արման Մանվելի	Գիտաշխատող	115 083	12	համատեղություն	20	1 380 996
Վարդանյան Առնոլդ Սամվելի	Գիտաշխատող	115 083	12	համատեղություն	20	1 380 996
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						9298004
Ընդհանուր գումար՝						108 222 716

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Էմիլ Հրաչյայի Օրդուխանյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման _____ (ստորագրություն) _____ (ԱԱՀ)

ստորաբաժանման ղեկավար՝

Կ. Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024թ.
N 1-31/24-1/IPSL պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆՊԼԱՆ*

«Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)	Հայաստանի Հանրապետությունում սոցիալական, քաղաքական, իրավական գործընթացների վերլուծություն և դրանց զարգացման հեռանկարների ուղենշում: Առաջնային ուղղություններ՝ Փիլիսոփայության տեսության և պատմության հիմնախնդիրներ, հայ իրավաքաղաքական մտքի ուսումնասիրություն և վերլուծություն, սահմանադրական իրավունքի և իրավունքի միջազգայնացման, իրավական պետության կայացման հիմնախնդիրների ուսումնասիրություն, քաղաքացիական-ժողովրդավարական հասարակության, քաղաքական մշակույթի, տարածաշրջանային քաղաքական գործընթացների և անվտանգության երկրառազմավարական հիմնախնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, միգրացիայի, մասնավորապես՝ ներգաղթի հիմնախնդիրների ուսումնասիրություն	1. Գիտատեսական և գիտագործնական վերլուծությունների իրականացում փաստերի հավաքագրմամբ:	1-4 եռամսյակ
			2. Գիտաուսումնական գործունեություն, երիտասարդ գիտական կադրերի պատրաստում:	1-4 եռամսյակ
			3. Կիրառական հետազոտությունների իրականացում:	2-4 եռամսյակ
			4. Գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում:	1-4 եռամսյակ
			5. Իրավական փաստաթղթերի, օրենքների, օրինագծերի և պաշտոնական որոշումների ու դրանց նախագծերի գիտական փորձաքննության իրականացում, իրավաբանական, քաղաքական խորհրդատվության տրամադրում:	1-4 եռամսյակ

Կազմակերպության տնօրեն՝ _____ Էմիլ Օրդուխանյան
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Էմիլ Օրդուխանյան
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

*Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով: